**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք**
**ք. Մարալիկ, Մադաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 155-Ա**

<<28>> նոյեմբերի 2024 թվական քաղաք Մարալիկ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻ՝ ԱԼԲԵՐՏ ԳԵՂԱՄԻ ՍԻՄՈՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ, ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդված 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 39-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հաշվառման /չափագրման/ տվյալների մուտքագրման 2023-12-28 ծածկագիր՝ 2023KJYHVE տեղեկանքը, հաշվի առնելով, որ ինքնակամ շինությունն իրականացրած քաղաքացի Ալբերտ Գեղամի Սիմոնյանը, իր 2024 թվականի հունիսի 5-ի դիմումով ընդունել է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով օրինական ճանաչված և Անի համայնքի սեփականությունը համարված **23.96** քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի օժանդակ ավտոտնակի շինությունը և նրա պահպանման ու սպասարկման համար նախատեսված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 08-003-0034-0042 կադաստրային ծածկագրով **0,002396** հեկտար մակերեսով հողամասի (Վկայական 27092024-08-0033, անշարժ գույքի հասցեն՝ մարզ Շիրակի, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Մադաթյան փողոց 15/9 ավտոտնակ) ուղղակի վաճառքով գնման նախապատվության իրավունքը.

**Հայաստանի Հանրապետության**
**Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է**

1. Համայնքի ղեկավարի առաջարկությամբ, տալ համաձայնություն՝ օրինական ճանաչված և համայնքի սեփականությունը համարված **23.96** քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի օժանդակ ավտոտնակի շինությունը և նրա պահպանման ու սպասարկման համար նախատեսված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի

կառուցապատման գործառնական նշանակության 08-003-0034-0042 կադաստրային ծածկագրով 0,002396 հեկտար մակերեսով հողամասը (Վկայական 27092024-08-0033, անշարժ գույքի հասցեն՝ մարզ Շիրակի, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Մադաթյան փողոց 15/9 ավտոտնակ) գնման նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքով **43 608 (քառասուներեք հազար վեց հարյուր ութ) Հայաստանի Հանրապետության դրամ** ընդհանուր արժեքով /Հողի արժեք՝ 18 977 ՀՀ դրամ, ինքնակամ շինության օրինականացման վճար՝ 24 631 ՀՀ դրամ/ վաճառել կառուցապատողին, քաղաքացի՝ Ալբերտ Գեղամի Սիմոնյանին /Նույնականացման քարտ 2605560279, տրված՝ 29.03.2024թ, 022-ի կողմից, հաշվառման հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, ք. Մարալիկ, Մադաթյան փողոց շենք 15, բն. 29):

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝ Ա. Սարիբեկյանին.

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքացու հետ կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր և ապահովել սույն որոշումից բխող իրավունքների պետական գրանցումը՝ քաղաքացու միջոցներով:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ**

| | **Կողմ՝11** | **դեմ՝ 0** | **ձեռնպահ՝ 0** |
|---|---|---|---|
| **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ** | _____ | _____ | _____ |
| **Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ** | _____ | _____ | _____ |
| **Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ** | _____ | _____ | _____ |
| **Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ** | _____ | _____ | _____ |
| **Ա. ՇԱԲՈՅԱՆ** | _____ | _____ | _____ |
| **Հ. ՋԱՏԻԿՅԱՆ** | _____ | _____ | _____ |
| **Ժ. ԱԼԵՔՅԱՆ** | _____ | _____ | _____ |
| **Գ. ԱՂԱԲԵԿՅԱՆ** | _____ | _____ | _____ |
| **Ն. ՍԱՐՈՅԱՆ** | _____ | _____ | _____ |
| **Գ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆ** | _____ | _____ | _____ |
| **Մ. ԱՍԼԱՆՅԱՆ** | _____ | _____ | _____ |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

<<28>> նոյեմբերի 2024 թ.
քաղաք Մարալիկ